ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԺԶ-ԺԷ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2023

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնում:

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր
Մելքոնյան Աշոտ Աղասու

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թունյան Վալերի Գեորգիի

պատմական գիտությունների թեկնածու
Մալոյան Արման Մանուկի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. սեպտեմբերի 8-ին, ժամը՝ 13^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. հուլիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Խորհրդային տարիներին հասկանալի պատճառներով անտեսված էին եկեղեցագիտությանն ու կրոնագիտությանը վերաբերող հիմնախնդիրները, որոնք ուսումնասիրվում էին հիմնականում հպանցիկ, երբեմն էլ՝ ոչ մասնագիտական ճշգրտությամբ, իսկ վերլուծություններն ու մեկնաբանություններն էլ լինում էին հաճախ կանխակալ՝ հարմարեցված ժամանակի գաղափարական սկզբունքներին[1]: Պատկերը թեպետ այլ էր սփյուռքահայության շրջանում, որը, սակայն, ևս գոհացուցիչ չէր:

ԽՍՀՄ-ի փլուզումը նոր հնարավորություններ ընձեռեց միության կազմում եղած ժողովուրդների ազգային պատմության անաչառ ուսումնասիրության համար: Հնարավորություն ստեղծվեց թոթափելու խորհրդային դարաշրջանի գաղափարական արգելքներն ու հանիրավի խիստ գրաքննության կապանքները հատկապես կրոնական գրականության և պարբերականների[2] նկատմամբ: Հայագետները մի շարք թեմաներ ենթարկեցին համակողմանի ուսումնասիրության[3], հայրենիքում նոր թափ առավ հատկապես եկեղեցագիտական ու կրոնագիտական թեմաների ուսումնասիրությունը[4]: Նշյալ ոլորտում զգալի են ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրի գիտնականների կատարած և կատարվող ուսումնասիրությունները:

Այսօր, թերևս, անհրաժեշտ է վերանայել, նորովի ուսումնասիրել ու արժևորել Հայոց պատմությանը (անքակտելիորեն նաև Հայ Եկեղեցու պատմությանը) վերաբերող բազմաթիվ հիմնախնդիրներ և առանցքային

---

[1] Տե՛ս Հայոց պատմություն, հտ. IV, գիրք երկրորդ, նորագույն ժամանակաշրջան (1945–1991), Երևան, 2016, էջ 335:

[2] Տե՛ս Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, Վազգէն Ա Պալճեան Ամենայն Հայոց Կաթողիկոս (1955-1994), գիրք ԺԶ, կազմող և խմբագիր՝ Գէորգ Եազըճեան, Երևան, 2008, էջ 61-63:

[3] Տե՛ս Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, խմբ.՝ Հ. Սիմոնյանի, Երևան, 2012, էջ 783:

[4] Հայագիտության մեջ մինչև այժմ չկա հստակ տարանջատում հայ ժողովրդի քրիստոնեական շրջանի պատմության և Հայ Եկեղեցու պատմության միջև *(հիմնախդրին և հարակից մի շարք այլ հարցերի անդրադարձել ենք «Ո՞ր դեպքում է հնարավոր «Հայոց եկեղեցու պատմություն»-ը ներառել «Հայոց պատմության» դասագրքերում» խորագրով հրապարակմամբ (տե՛ս https://ter-hambardzum.net/vor-depkhum-e-hnaravor-hayoc-ekeghecu-patmuthyun-eh-nerarel/, ստուգված 22.02.2023, ժամը՝ 15:30)*:

նյութեր՝ մասնավորապես հայ ազատագրական պայքարի թեման, որը թեև չի անտեսվել, այնուամենայնիվ բավարար չափով չի ուսումնասիրվել[5]:

ԺԶ–ԺԷ դարերում հայ ժողովուրդը զրկված էր համահայկական պետականությունից, իսկ Հայաստանը բաժանված էր երկու տերությունների՝ օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև: Մեծ ու փոքր, մանր և միջին իշխանական տները պառակտված և հյուծված էին նաև ներքնապես, և չհայտնվեց մեկը, որ կարողանար դիմադրական լայն ճակատ ստեղծել՝ Հայոց անկախ պետականությունը վերակերտելու համար: Նշյալ ժամանակաշրջանում պետական մի շարք գործառույթներ իրականացնում էր Հայ Առաքելական Եկեղեցին: Վերջինս ազատագրական պայքար կազմակերպելու համար ստիպված էր հրավիրել գաղտնի խորհրդաժողովներ, ստեղծել և գլխավորել բանագնաց խմբեր, պատվիրակություններ, վարել բանակցություններ, ինչպես նաև փորձել համախմբել հայությանը: Հայ Եկեղեցին, փաստորեն, հատկապես ԺԶ–ԺԷ դարերում, համազգային միակ կառույցն էր, որի շուրջ համախմբվեց հայ ժողովուրդը թե՛ պատմական հայրենիքում և թե՛ օտար ափերում: Եվ քանի որ Հայ Եկեղեցին հայության հոգևոր իշխանության կրողն էր, հետևաբար օտար պետությունների հետ հարաբերություններում դարձավ նաև քաղաքական իշխանության կրող և ներկայացուցիչ: Ուստի հայ ժողովուրդը որդեգրեց մի քաղաքականություն, ըստ որի՝ նրա կյանքում քաղաքական ու հոգևոր ուղղությունները պետք է ընթանային նույն հունով, և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին պետք է դառնար *հայ* ինքնության որոշիչ հիմնասյուներից մեկը[6]:

---

[5] Տե՛ս **Անասյան Հ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. պատմական հետազոտություն, Երևան, 1961, էջ 5 (այսուհետ՝ **Անասյան Հ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում). հմմտ. **Ութուջյան Ա.**, Միքայել Չամչյանը և 16-րդ դարի հայ ազատագրական մտքի պատմության մի քանի հարցեր, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 225:

[6] Ինքնության և ինքնաճանաչողության վերոնշյալ մոտեցումն է պատճառը, որ հավասարության նշան է դրվել «քրիստոնյա» և «հայ» հասկացությունների միջև: Այսինքն՝ տեղի է ունեցել կրոնական (իմա՛ քրիստոնեական) և ազգային (իմա՛ էթնիկ) ինքնությունների այնպիսի նույնացում, որ նույնիսկ աշխարհականների կողմից Աստծու և Եկեղեցու համար համարձակ մահանալը հավասար է եղել երկրի և նրա թագավորների համար մահանալուն. հմմտ. **Փաւստոս Բուզանդ,** Պատմութիւն հայոց. տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 415: Գրեթե բոլոր ուսումնասիրողներն էլ, անկախ «ինքնություն» հասկացության ձևակերպման նմանություններից և տարբերություններից, հիմնական բնութագրիչների ցանկում պարտադիր ներառում են կրոնը՝ ի դեմս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու. տե՛ս **Abrahamian L.,** Armenian identity in a changing world, Costa Mesa, 2006, էջ 115, **Մարության Հ.,** Հայ ինքնության

Հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու պատմության ծիրում ուրույն ճանապարհ է անցել հայ ազատագրական պայքարի գիտական ուսումնասիրությունը, որը թե՛ գաղափարական, թե՛ ռազմական, թե՛ դիվանագիտական և թե՛ այլ առումներով կարևոր է, քանի որ բոլոր ժամանակներում էլ Հայրենիքի և Եկեղեցու պաշտպանությանը մասնակցել են հոգևորականության բոլոր դասերը՝ թե՛ ռազմի դաշտում (հատկապես գոյատևման պայքարի շրջանակներում[7]), թե՛ մշակութային, թե՛ քաղաքական՝ համագործակցելով ազգային-ազատագրական շարժման ղեկավարների, իսկ հետագայում նաև՝ հայդուկային խմբերի հետ[8]:

Այսօր անհրաժեշտ է վերանայել, նորովի ուսումնասիրել ու արժևորել Հայոց պատմությանը (անքակտելիորեն նաև Հայ Եկեղեցու պատմությանը) վերաբերող բազմաթիվ հիմնախնդիրներ, առանցքային նյութեր: Սույն ատենախոսությունը փորձ է՝ փաստագրությամբ ներկայացնելու Ս. Էջմիածնի տեղն ու դերը ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի հոլովույթում: Համակողմանիորեն ներկայացվել են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը և գործունեությունը հայ ազատագրական պայքարի[9] տվյալ շրջափուլում[10], որը շարունակվում է նաև այսօր[11]:

պահպանման հիմնախնդիրները Սփյուռքի համայնքներում XXI դարասկզբին, տե՛ս «Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2018, էջ 67, **Զաքարյան Ս.,** Հայոց ինքնության հիմնահարցեր, Երևան, 2020, էջ 70:

[7] Տե՛ս **Պողոս Լևոն Զեքիյան**, Հայկական ուղին դեպի արդիականություն. Հայ ինքնությունն ավանդույթի և նորույթի, հատուկի և ընդհանրականի միջև, էջ 55. տե՛ս http://arjps.org/cover/arm/The%20Armenian%20Way%20to%20Modernity.pdf: Հմմտ. **Boghos Levon Zekiyan,** The armenian way to modernity. Armenian Identity Between Tradition and Innovation, Specifity and Universality, Venezia, 1997, էջ 67-68:

[8] Տե՛ս **Թումանյան Լ.**, Զինվորյալ հոգևորականներ, Երևան, 2017, էջ 7:

[9] Կարծում ենք՝ հայ ազատագրական պայքարի պատմությունը սերտորեն առնչվում, զուգահեռվում և միահյուսվում է հայկական բանակի պատմությանը, որը *«դեռևս ըստ արժանվույն հետազոտված ու գնահատված չէ»* (**Այվազյան Ա.**, Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4–5-րդ դարեր), Երևան, 2021, էջ 6):

[10] 2020 թ. 44-օրյա պատերազմին հոգևորականների մասնակցության մասին տե՛ս **Արարատ քհն. Պողոսյան**, Ես եմ հովիւն քաջ և ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2020, հոկտեմբեր Բ, թ. 20 (568), ներդիր, էջ Ա-Դ:

[11] Տե՛ս Մարդու իրավունքների խախտումներն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում. փաստահավաք զեկույց, Երևան, 2022, էջ 51-229, **Ղևոնդյան Ա.**, Արցախյան 44-օրյա պատերազմը և Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական փոխակերպման գործընթացը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2022, № 1, էջ 9-22 և **Բեգլարյան Գ.**, Արցախի հոգևոր-պատմական հուշարձանները. քարտեզ, Ս. Էջմիածին, 2021:

Հետազոտության առարկան նպատակը և խնդիրները: Հետազոտության առարկան ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի լուսաբանումն է՝ Հայ Եկեղեցու ընդհանուր դերակատարման հմատեքստում[12]: Ատենախոսության նպատակն է մանրամասնությամբ ներկայացնել Ս. Էջմիածնի տեղն ու դերը ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարում[13]: Աշխատության նպատակն է նաև սույն թեման ներկայացնել որպես Հայոց պատմության կարևոր բաղկացուցիչ՝ չտարանջատելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը հայ ժողովրդի պատմությունից[14]:

Խնդիրը լուծելու համար հարկավոր է եղել առաջին հերթին խորամուխ լինել թեմային առնչվող՝ աղբյուրագիտական նշանակություն ունեցող նյութերի ուսումնասիրության մեջ: Բացի այդ՝ կարևորվել է նաև այդ նյութերին անդրադարձած աշխատություններում առկա վերլուծություններն ու եզրահանգումները ներկայացնելը: Այս ամենն իրականացվել է՝ համադրելով և համեմատելով սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ ուսումնասիրությունների եզրահանգումները: Խնդիր է դրվել.

ա) ներկայացնել ԺԶ-ԺԷ դդ. հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերը և նպաստող հանգամանքները,

բ) վեր հանել Ս. Էջմիածնի 1547 թ. և Սեբաստիայի 1562 թ. գաղտնի խորհրդաժողովների արդյունքները և Աբգար դպիր Եվդոկացու (Թոխատեցու) բանագնացությունը,

---

[12] Հասարակագիտության տարբեր ճյուղերը լրջորեն զբաղվում են «արդար» և «անարդար» պատերազմների տեսությամբ, քանի որ քրիստոնեական Եկեղեցին իր բնույթով և էությամբ առավելապես պատմական ուժ է, որն ի զորու է բեկելու և ուղղորդելու մարդկության և ժողովուրդների ճակատագրերը. տե՛ս **Бердяев Н.**, Смысл истории. Новое средневековье, составление и комментарии В. В. Сапова, Москва, 2022, էջ 108: Արդարացի պատերազմի տեսության վերաբերյալ տե՛ս **Մովսես վրդ. Սարգսյան**, Արդարացի պատերազմի տեսությունը, Ս. Էջմիածին, 2021, էջ 76-86:

[13] Սույն թեմային հարակից են նաև հայ ազատագրական լեգենդի, Սսի և Աղթամարի կաթողիկոսներ Խաչատուր Գաղատացու և Հովհաննես Թութունջու գործունեությունը: Սակայն նկատի ունենալով ատենախոսության ծավալի սահմանափակ լինելու պահանջը՝ նպատակահարմար համարեցինք այստեղ շրջանցել վերոնշյալ թեմաները:

[14] Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունն ու հայ ժողովրդի պատմությունը միասնաբար ներկայացնելու միակ հաջողված տարբերակը ցույց է տվել Մաղաքիա արք. Օրմանյանը, որն իր եռահատոր հիմնարար աշխատությունն անվանեց ոչ թե Հայոց Եկեղեցու կամ հայ ժողովրդի պատմություն, այլ «Ազգապատում»՝ առաջնորդվելով այն պարզ ճշմարտությամբ, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և հայ ժողովրդի պատմությունները, բովանդակ առումով, անքակտելի ու անբաժան են:

գ) լուսաբանել Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի՝ հայ ազատագրական պայքարի ուղղությամբ իրականացրած գործունեությունը 1655–1674 թթ.,

դ) բացահայտել Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի 1677–1680 թթ. գործունեությունը և հարակից այլ հարցեր:

***Թեմայի ժամանակագրական շրջանը*:** Հայ ազատագրական պայքարի թեմայի ուսումնասիրության ժամանակագրական շրջանակը՝ թեմայի ընդգրկունությամբ պայմանավորված, շատ լայն է: Այն ընգրկում է հայ ժողովրդի պատմության ընթացքը՝ վաղ միջնադարից ցայսօր և դեռ չի ավարտվել: Քանի որ ԺՋ և ԺԷ դարերի պատմությունը համեմատաբար քիչ է ուսումնասիրված, թեմայի ժամանակագրական շրջանն ընտրել ենք նշված դարերը. այս ժամանակահատվածում պետականության բացակայության պայմաններում Հայ Եկեղեցին ստանձնել էր ոչ միայն ազգին առաջնորդելու, այլև ազատարարի, ազատագրության միջոցների փնտրտուքի և քաղաքական կողմնորոշման պատասխանատվությունը: Թեման ընդգրկում է ԺՋ դարի երկրորդ կեսից մինչև ԺԷ դարի 80-ական թվականների միջանկյալ հատվածում տեղի ունեցած իրադարձությունները, որոնք առնչվում են Հայոց կաթողիկոսների՝ տվյալ ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարի ուղղությամբ իրականացրած գործունեությանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հայ ազատագրական պայքարի ամբողջական պատմություն ունենալու համար նախևառաջ պետք է ուսումնասիրել *«օղակ առ օղակ»*[15]:

ԺՋ–ԺԷ դարերում հայ ազատագրական պայքարում Սուրբ Էջմիածնի՝ գաղափարական և կազմակերպչական հարցերում բերած կարևոր նպաստն ուսումնասիրելու համար հաճախ կիրառվել են պատմության հետազոտման պատմահամեմատական, պատմաքննական, վերլուծական, համադրական, իսկ երբեմն էլ՝ անհրաժեշտության դեպքում, նկարագրական մեթոդները: Առաջնորդվելով պատմականության սկզբունքով՝ փորձ է արվել հետազոտվող խնդիրները դիտարկել փաստագրական նյութերի վերլուծական քննությամբ և անաչառությամբ, որը հնարավորություն է տվել իրադարձությունները ենթարկել տեսական ընդհանրացումների և պատմական իրողությունները ներկայացնել անաչառորեն:

***Ատենախոսության գիտական նորույթը*:** Խնդրո թեմայի շուրջ ստեղծվել է բավականին արժեքավոր գրականություն: Սակայն առաջին

[15] **Անասյան Հ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 5:

անգամ է թեման՝ ԺԶ–ԺԷ դդ. ժամանակային ընդգրկմամբ, ներկայացվում այնպես, որ քննության առնվեն և ցույց տրվեն Սուրբ Էջմիածնի՝ ի դեմս կաթողիկոսների, կարևոր ներդրումը հայ ազատագրական պայքարի գաղափարական և կազմակերպչական, ինչպես նաև քաղաքական կողմնորոշման հարցերում: Բացի նշյալից՝ սույն ուսումնասիրության գիտական նորույթը պայմանավորված է նաև նրանով, որ հիմքում ունենալով աստվածաշնչյան տեղիները, ինչպես նաև հայ և օտար եկեղեցական հայրերի հայացքները, ներկայացվում է Հայ Եկեղեցու ժամանակակից վերաբերմունքը պատերազմի և խաղաղության հիմնախնդիրներին՝ որպես համակարգված վարդապետություն, ինչը հայ իրականության դիտանկյունից գործնականում չի ուսումնասիրվել[16]:

Աշխատանքում նորովի քննության են առնված նաև ԺԶ–ԺԷ դարերի վավերագրեր[17]՝ հրապարակված և վերլուծված ոչ Առաքելական Եկեղեցու հետևորդների կողմից, որոնք նյութերը ներկայացրել են հիմնականում Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների կրոնադավանաբանական հարաբերությունների տեսանկյունից՝ անտեսելով, սակայն, հայ ազատագրական պայքարին վերաբերող կարևոր տեղեկությունները: Բոլոր նմանօրինակ դեպքերում դրսևորվել է անաչառ վերաբերմունք: Բացի նշվածից՝ ատենախոսությունը կարևորվում է նրանով, որ առաջին անգամ ներկայացվում են ոչ միայն հայաստանյան, այլև արտերկրի արխիվների փաստաթղթեր, որոնցից որոշները *(հատկապես մերօրյա համակարգչային ծևաչափերով ներկայացնելը)* ցայսօր անհայտ են գիտական ու հանրային լայն շերտերի համար:

Ամբողջ ուսումնասիրության մեջ արված են մի շարք եզրահանգումներ, առաջադրված են կարծիքներ, շրջանառության մեջ են դրվել նոր նյութեր, որոնցով հնարավոր է վերականգնել, հերքել կամ հաստատել մի շարք կարևոր տեղեկություններ, որոնք առնչվում են խնդրո առարկա թեմային:

Թեմայի ուսումնասիրման աստիճանը: ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարում Հայոց Եկեղեցու դերակատարման

---

[16] Բացառությամբ Մովսես վրդ. Սարգսյանի «Արդարացի պատերազմի տեսությունը» (Ս. Էջմիածին, 2021) աշխատության:

[17] Վատիկանի առաքելական, Հավատի տարածման հանձնաժողովի, Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության և ՄՄ Մատենադարանի արխիվներից հատուկ սույն ուսումնասիրության համար տրամադրված մի շարք փաստաթղթերի բնագրեր, լուսապատճեն տարբերակով, ընթերցողին առաջին անգամ են ներկայացվում: Տե՛ս սույնի «Հավելված Ա» և «Հավելված Բ»:

հիմնահարցը՝ որպես առանձին ատենախոսության թեմա, նախկինում գիտական հետազոտության չի ենթարկվել: Ատենախոսության գիտական լիարժեքությունն ապահովում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներով գիտական շրջանառության մեջ դրված սկզբնաղբյուրային մեծածավալ նյութը: Ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք արժեքավոր պատմաաղբյուրագիտական մեծածավալ գրականությունից՝ հայաստանյան և արտերկրի պահոցներում պահպանվող արխիվային վավերագրերից, պատմագրական երկերից, պատմագիտական աշխատություններից, ուսումնասիրություններից և հրապարակումներից:

Թեմայի հետազոտության համար առաջնահերթ կարևորություն են ներկայացնում արխիվային փաստաթղթերը, որոնք նոր լույս են սփռում հիմնախնդրի լուսաբանման ուղղությամբ: Ատենախոսության փաստական նյութի շարադրման համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Վատիկանի առաքելական, Հավատի տարածման հանձնաժողովի և Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվներում պահվող վավերագրերն ու զեկուցագրերը, որոնց մեծ մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Ատենախոսության բազմաթիվ փաստերի վերհանման համար բացառիկ հենք է ծառայել տպագիր սկզբնաղբյուրային գրականությունը, որն իրենից ներկայացնում է ինչպես ԺԶ և ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի պատմությանը, այնպես էլ եկեղեցական-դիվանագիտական և քաղաքական հարաբերություններին նվիրված տպագիր վավերագրական բազմաթիվ նյութերի ժողովածուներ[18]:

---

[18] Աստուաձաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց, Վենէտիկ, 1805: Ժամակարգութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ յորում պարունակին սաղմոսք Դաւթի. Ժամագիրք ատենի և տօնացոյց, Ս. Էջմիածին, 1999: Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց, Ս. Էջմիածին, 2016: Ձայնքաղ շարական յորում բովանդակին հոգենուագ պաշտօներգութիւնք Սուրբ Եկեցւոյ Հայաստանեայց, Ս. Էջմիածին, 1999: Ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցւոյ, Ս. Էջմիածին, 1872: Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբյանց վանքի [ընդարձակ], հտ. Բ, կազմ. Նորայր եպս. Պողարեանը, Երուսաղէմ, 1967: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Է, ձեռագիրք 2101-2400, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, 2012: Մանր ժամանակագրություններ, հտ. Ա (XIII–XVIII դդ.,), հտ. Բ (XIII–XVIII դդ.,), կազմեց՝ Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1951, 1956: Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտակներ, պրակ Ա (ԺԵ–ԺԶ դդ.), կազմեց Հ. Դ. Փափազյանը, Երևան, 1956: Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում: XVI–XVII դդ. Կանուննամեներ, թարգմ., առաջաբ., ծանոթագր.՝ Ա. Սաֆրաստյան, Մ. Զուլալյան, Երևան, 1964: A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries, H. Chick (Editor, compiler), volume

Ատենախոսության համար առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում ժամանակի հայ և օտար մատենագիրների աշխատությունները[19]:

Բազմաթիվ հարցերի լուսաբանման առումով խիստ արժեքավոր են Հայ Առաքելական Եկեղեցու և հայ հարանվանությունների հոգևոր-եկեղեցական սպասավորների, միսիոներների, ազգային-քաղաքական, գրական-մշակութային հայ և օտար գործիչների ուղեգրությունները և հուշագրական վկայությունները[20]: Լինելով դեպքերի ոչ միայն ժամանակակիցը, այլև անմիջական մասնակիցը՝ այդ գործիչները ստվար քանակությամբ տեղեկություններ են հաղորդում ԺՁ և ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի պատմության և Հայ Եկեղեցու գործունեության վերաբերյալ:

1, Eyre and Spottiswoode, London, 1939. Histoire de L'etablissement du Christianisme dans les Indes Orientales, Par les Évêques Français et Autres Missionnaires Apostoliques. Tome Premier, Paris, 1803. Армяно-русские отношения в XVII в., сборник докыментов, т. 1, подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова, под редакцией проф. В. А. Парсамзна, Ереван, 1953. Армяно-русские отношения в XVIII веке, ред.: М. Нерсисян; Сост.: А. Алексанян и др., том IV, Ереван 1990. **Эзовъ Г.,** Начало сношений Эчмиадзинского патриаршего престола с русским правительством. Историческое изследование по неизданным документам, Тифлись 1901. **Эзовъ Г.,** Сношения Петра Великого с армянским народом. Документы извлеченные из московского главного и С.-Петербургского архивов министерства иностранных дел, австрийского продворного и государственного архива, королевско-147 баварского тайного государственного архива, Санкт Петербург, 1898.

[19] **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990: **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Հարցմանց, Երուսաղեմ,1993: **Զաքարիա Ագուլեցի,** Օրագրութիւն, Երևան, 1938: **Զաքարիա Քանաքեռցի,** Պատմութիւն: Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից: Աշխատասիր.՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2015: **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրութիւն, խմբ.՝ Ա. Սահակյան, աշխատասիր.՝ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999: **Հակոբ Կարնեցի**, Ժամանակագրություն, տե՛ս «Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ.», հտ. Ա, կազմ.՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951: **Յովհաննէս Ծործորեցի**, Մեկնութիւն աւետարանին որ ըստ Մատթէի (Ե 18 – ԻԸ 20), կազմողներ՝ Գոհար Ղազարյան, Սեդա Ստամբոլցյան, Գայանե Ներսիսյան, Ս. Էջմիածին, 2009: **Սիմեոն կաթողիկոս Երեւանցի**, Ջամբռ, թարգմ., առաջ. և ծանոթ.՝ Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները՝ Գ. Մ. Բաղալյանի, Երևան, 2003, 640:

[20] **Ժան Շարդեն**, Սըր Ժան Շարդենի ճանապարհորդությունները Պարսկաստանով և Արևելյան Հնդկաստանով, «Էջմիածին», 2008, № Բ: **Պէրպէրեան Հ.**, Էջմիածնի վանքը 1662ին, «Հասկ», 1950, № 9-10, էջ 271-273: **Жан Шарден**, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., перевод Е. В. Бахутовой и Д. П. Косовича (из журнала "Кавказский вестник" за 1900 и 1901 гг.), скоропечатня М. Мартиросянца, Тифлис, 1902. **François Pallu**, Relation abregee des missions et des voyages des evesques francois, envoyez aux Royaumes de la Chine, Cochinchine, Tonquin, & Siam. Par messireFrancois Pallu evesque d'Heliopolis, Paris, 1668. **Petrus Bedik**, Cehil svtvn, Explicatio utriusque celeberrimi, ac pretiosissimi theatriquadraginta columnarum in Perside Orientis, Typis Leopoldi Voigt, universitatis typogr., Viennae Austriae,1678.

Ատենախոսության թեմայի վերաբերյալ օգտաշատ վկայություններ են պահպանվել Էջմիածնի և Սսի կաթողիկոսությունների, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունների եկեղեցական գործիչների աշխատություններում[21]:

Հայրենական և սփյուռքահայ պատմագրության մեջ ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի և այդ պայքարում Հայ Եկեղեցու խաղացած դերի առաջին հետազոտողներից են Լեոն[22], Ա. Հովհաննիսյանը[23], Ա. Ալպոյաճյանը[24], Հ. Քյուրտյանը[25], Հ. Անասյանը[26], Մ. Զուլալյանը[27], Պ. Հովհաննիսյանը[28] և ուրիշներ, որոնք քննության են ենթարկել ոչ միայն հայ ազատագրական պայքարի հիմնական միտումները, այլև Հայ Եկեղեցու

---

[21] **Ղևոնդ Ալիշան,** Հայապատում, Պատմիչք և պատմութիւնք հայոց, Վենետիկ, 1901: **Ղևոնդ Ալիշան,** Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց և վենետաց ի ԺԳ–[Ժ]Դ և ի ԺԵ–[Ժ]Զ դարս, Ս. Ղազար, Վենետիկ, 1896: **Մովսես վրդ. Թերզեան**, Յակոբ Դ Ջուղայեցի (1655–1680), Պէյրութ, 1956: **Բաբկեն Կիւլեսէրեան Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ 1441-էն մինչև մեր օրերը, Անթիլիաս, 1990: **Միքայէլ Չամչեան**, Հայոց պատմութիւն, սկզբից մինչև 1784 թվականը, հտ. Գ, Երևան, 1984: **Աղեքսանդր վրդ. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս և միութեան նոցա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի փլորենտեան սինհոդոսի, Վիէննա 1878: **Գրիգոր վրդ. Պետրովիչ**, Հայ Եկեղեցին Լեհաստանի մէջ (1350-1624), Վիեննա, 1980: **Պետրովիչ Գրիգոր վրդ.**, Ստեփանոս Ե Սալմաստեցի կաթողիկոս Էջմիածնի (1543–1552), Վենետիկ, 1964: **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներովը պատմուած, հտ. Բ, Ս. Էջմիածին, 2001:

[22] **Լեո**, Երկերի ժողովածու, հտ. Գ, Երևան, 1969: Երկերի ժողովածու, հտ. Ե, Երևան, 1986: **Լէօ**, Հայկական տպագրութիւն. մեր կեանքը, գրականութիւնը անցեալում, հտ. Ա, XVI–XVII դար, Թիֆլիս, 1901:

[23] **Հովհաննիսեան Ա.**, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը. պատմական-քննադատական ուսումնասիրութիւն, Էջմիածին, 1921: **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957: **Հովհաննիսյան Ա.,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, 1959: **Հովհաննիսյան Ա.**, Զաքարիա Ագուլեցին և իր ժամանակը, հրատ. պատրաստ. Վ. Պողոսյանը, Երևան, 2017: **Հովհաննիսյան Ա.**, Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, կազմող և ընդհանուր խմբագիր՝ Վարդան Ազատյան, գերմաներենից թարգմ.՝ Հրաչյա Ստեփանյանի, Երևան, 2016:

[24] **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ ազատագրական շարժման. դասախօսութիւններու շարք, հրատարակութեան պատրաստեց Հայկ Աւագեանը, Գահիրէ, 2019:

[25] **Քիւրտեան Յ.**, Իսրայէլ Օրի. պատմաքննական ուսումնասիրութիւն, Ս. Ղազար, Վենետիկ, 1960: **Քիւրտեան Յ.**, Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս–Լիբանան, 1965:

[26] **Անասեան Յ.**, Ստեփանոս Սալմաստեցի (հատուածներ նոր ուսումնասիրութիւնից), Երուսաղէմ, 1981, **Անասյան Հ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. պատմական հետազոտություն, Երևան, 1961:

[27] **Զուլալյան Մ.**, Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա, Երևան, 1990:

[28] **Հովհաննիսյան Պ.**, Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես – XVIII դարի վերջ), Երևան, 2010:

հոգևոր-եկեղեցական կյանքի առանձին հարցեր: Բնականաբար օգտագործված մի շարք ուսումնասիրություններ իրենց բովանդակության ժամանակային լայն ընդգրկունությամբ, օգտագործած տպագիր և անտիպ սկզբնաղբյուրների առատությամբ մեր ուսումնասիրության ողջ ընթացքում ունեցել են ուղղորդիչ նշանակություն: Այդպիսի երախտարժան հեղինակներից են Միքայել Չամչյանը[29], Կարապետ Էզովը[30], Մաղաքիա արք. Օրմանյանը[31], Ներսես Ակինյանը[32], Աշոտ Հովհաննիսյանը[33], Հակոբ Անասյանը[34], Պետրոս Հովհաննիսյանը[35] և այլք[36]:

Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում նաև օտար որոշ հեղինակների և հայ հեղինակների օտարալեզու աշխատություններում պահպանված առանձին վկայությունները ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի և այդ պայքարում Հայ Եկեղեցու առանձնահատուկ գործոնի և մեզ հետաքրքրող ժամանակահատվածի տարբեր դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ[37]:

---

[29] **Միքայէլ Չամչեան**, Հայոց պատմութիւն, հտ. Գ, Երևան, 1984:

[30] **Эзов Г.**, Сношения Петра Великого с армянским народом. Документы извлеченные из московского главного и С.-Петербургского архивов министерства иностранных дел, австрийского продворного и государственного архива, королевско-баварского тайного государственного архива СПб, 1898 (այսուհետ՝ **Эзовъ Г.**, Сношения Петра Великого с армянским народом).

[31] **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներովը պատմուած, հտ. Բ, Ս. Էջմիածին, 2001 (այսուհետ՝ **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Բ):

[32] **Ակինեան Ն.**, Ազատութեան շարժումը ԺԵ–ԺԶ դարուն Հայոց մէջ, «Հանդէս ամսօրեայ», 1917/18, № 1-12 (այսուհետ՝ **Ակինեան Ն.**, Ազատութեան շարժումը ԺԵ–ԺԶ դարուն Հայոց մէջ):

[33] **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», գիրք երկրորդ, Երևան, 1959 (այսուհետ՝ **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ):

[34] **Անասյան Հ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում:

[35] **Հովհաննիսյան Պ.**, Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես – XVIII դարի վերջ), Երևան, 2010 (այսուհետ՝ **Հովհաննիսյան Պ.**, Հայ ազատագրական շարժումները):

[36] Հիշատակված և չհիշատակված բոլոր ուսումնասիրողներին պետք է արժանին մատուցել մինչ այս պահը հիշատակված թեմային ուղիղ, միջնորդավորված և կամ հպանցիկ անդրադարձների համար: Դրանցում հաճախ առաջին անգամ գիտության մեջ շրջանառվել են արխիվային նյութեր և սկզբնաղբյուրային տեղեկություններ: Այնուամենայնիվ մերօրյա իրողությունների, գիտության առաջընթացի նոր աղբյուրների, արխիվային նյութերի և աղբյուրների օգտագործման և համադրման պայմաններում արդեն իսկ անհրաժեշտություն էր, որ սույն հիմնախնդիրը հետազոտվի և ընթերցողին հրամցվի նոր դիտանկյունից՝ աղբյուրների նորովի լուսաբանմամբ և նոր եզրահանգումներով՝ փորձելով պատասխանել մի շարք դեռևս լուծման կարոտ հարցադրումների:

[37] **Bomati Y.**, Nahavandi H., Shah Abbas, Emperor of Persia, 1587–1629, tranlated by Azizeh Azodi, edited by Parviz Amouzegar, Los Angeles, 2017. **Cragg G.**, The Church and the age of reason 1648-1789, London, 1972. **Halft D.**, Paolo Piromalli, Christian-Muslim Relations A Bibliographical History, Volume 10. Ottoman and Safavid Empires (1600–1700), Edited by David Thomas and John Chesworth with Lejla Demiri, Emma Gaze Loghin, Claire Norton, Radu Păun, Reza Pourjavady, Umar Ryad,

Ատենախոսության գործնական-կիրառական նշանակությունը: Սույն ատենախոսությունն ունի գործնական-կիրառական և գիտաճանաչողական որոշակի նշանակություն: Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը, առաջ քաշված դրույթները, մեկնաբանությունները, եզրահանգումները, նկատառումները կարող են օգտագործել Հայ Առաքելական Եկեղեցու, նրա նվիրապետական աթոռների և ընդհանրապես Հայաստանի պատմությամբ հետաքրքրվող ուսումնասիրողները, պետական դիվանագիտական առաքելություն իրականացնողները՝ խուսափելու համար անցյալի սխալները կրկնելուց: Ատենախոսությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող է օգտակար լինել ինչպես ՀՀ բուհերի մասնագիտական ֆակուլտետներում հատուկ դասընթացների և առանձին առարկաների դասավանդման ժամանակ, այնպես էլ հետագա ուսումնասիրությունների, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում: Այն քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումներն արտացոլված են հեղինակի՝ ՀՀ բարձրագույն

Carsten Walbiner, Leiden: Brill, Boston, 2017. **Lamb H.**, The March of Muscovy. Ivan the Terrible and the Growth of the Russian Empaire 1400-1648, N. Y., 1948. **Mayer H. E.**, The Crusades (translated by John Gillinham), 1972. Our Sunday Visitor's Catholic Encyclopedia, revised edition, ed. by P. Stravinskas, /Our Sunday Visitor Publishing Division/, Huntigngton–Indiana, 1998. **Parry V.,** A History of the Ottoman Empire to 1730, edited by M. A. Cook, Cambridge,1976. **Shannon T.**, What are they saying about peace and war?, New York, 1983. The Cambridge History of Turkey, Volume 2, The Ottoman Empire as a World Power (1453–1603), Edited by Suraiya N. Faroqhi and Kate Fleet, Cambridge, 2013. **Walzer M.**, Just and unjust wars. A moral argument with historical illustrations, New York, 2006. **Zekiyan Boghos Levon**, The armenian way to modernity. Armenian Identity Between Tradition and Innovation, Venezia, 1997. **Абдусаламов М.-П.**, Кумыкские феодальные владения в контексте русско- иранского противоборства на Кавказе в 50-х гг. XVII в., Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена, СПб., 2014, № 172. **Айвазян К.**, История отношений русской и армянской церквей средине века, Ред.: С. Аревшатян, Е. Гольдич, Ереван,1989. **Зимин А.**, Реформы Ивана Грозного: очерки социально-экономической истории России середины XVI в., Москва, 1960. **Зулалян М.**, Армения в первой половине XVI в., Москва, 1971. **Королюк В. Д.**, Ливонская война. из истории внешней политики Русского централизованного государства во второй половине XVI в., Москва, 1954. **Кушева Е.**, Народы Северного Кавказа и их связи с Россией (вторая половина XVI–30-е годы XVIII века), Москва, 1963. **Николай К.**, История Государства Российскаго, т. 1, СПб, [1816] –1817. **Оганесян М. Л.**, Армянские переселенцы и национально-освободительная борьба украинского народа против турецко-татарских захватчиков. տե՛ս «Исторические связи и дружба украинского и армянского народов», выпуск III, Ереван, 1971. **Пигулевская И., Якубовский А., Петрушевский И., Строева Л., Беленицкий А.,** История Ирана с древнейших времен до конца XVIII века, Ленинград, 1958. **Хорошкевич А.,** Россия в системе международных отношений середины XVI века, Москва, 2003.

որակավորման հանձնաժողովի երաշխավորած ամսագրերում հրատարակված 7 հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից:

«Ներածության» մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, հետազոտության առարկան, նպատակները, խնդիրները, ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլխում՝ **«ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության հիմնավորումը և նպաստող հանգամանքները»**, առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացվում են ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարին նպաստող մի շարք կարևոր հանգամանքները, նաև հայ ազատագրական պայքարում եկեղեցական գործիչների ներգրավվածության գաղափարախոսական հիմնավորումները: Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որ կրում են հետևյալ խորագրերը՝ ա) **«Խաղաղության և պատերազմի ընկալումներն Աստվածաշնչում և Եկեղեցում»**, բ) **«ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերը»**, գ) **«ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարին նպաստող հանգամանքները»**:

Առաջին ենթագլխում ցույց է տրվում, որ թեև Հայ Եկեղեցու դիրքորոշումը պատերազմների և արյունահեղությունների նկատմամբ մշտապես եղել է և է խիստ և մերժող (Մատթ. ԻԶ 52), ինչը չի նշանակում, թե Հայ Եկեղեցին դեմ է հանուն հավատի, սրբության և սրբավայրի, մերձավորի կյանքի պաշտպանության, արդարության և ազատության վերականգման համար մղված պատերազմներին (Մատթ. Ժ 34):

Երկրորդ ենթագլխի նպատակն է ապացուցել, որ խնդրո առարկա հիմնահարցի լուծման շրջանակներում Հայ Եկեղեցին, որպես քրիստոնեական հնագույն Եկեղեցի, ստեղծել է կուռ և անխոցելի համակարգ՝ ազատագրական պայքարը նախաձեռնելու, կազմակերպելու, ուղղորդելու և առաջնորդելու համար:

Երրորդ ենթագլուխում ներկայացվում են ներազգային կյանքում գոյություն ունեցող այն հանգամանքներն ու պայմանները, որոնք կարևոր էին ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարական ու

գործնական հարթություններում որոշակի հաջողություններ արձանագրելու համար:

Երկրորդ գլխում՝ **«Սուրբ էջմիածնի 1547 թ. և Սեբաստիայի 1562 թ. ժողովների նշանակությունը ԺՉ դարի հայ ազատագրական պայքարի ծրագրերում»**, համակողմանի անդարադարձ է կատարվում ժողովներին՝ ընդգծելով, որ պայքարն այդ շրջանում կրել է համակարգված բնույթ: Այս իրողության կրողները դարձել են Ամենայն Հայոց Կաթողիկոսները՝ որպես շարժման կազմակերպչներ: Այս գլուխն իր հերթին ունի երկու ենթագլուխ, որոնցում, խնդրո առարկա թեմայի շրջանակում, սահմանվում են խնդիրները. ա) **«Ս. Էջմիածնի՝ 1547 թ. խորհրդաժողովը և դրա արդյունքը»**, բ) **«Սեբաստիայի՝ 1562 թ. խորհրդաժողովը և Աբգար դպիր Եվդոկացու (Թոխատեցու) բանագնացությունը»**:

Առաջին ենթագլխում ներկայացվում է Ստեփանոս Սալմաստեցու նախաձեռնությամբ գումարված խորհրդաժողովի կարևորագույն դերը, ըստ որի՝ առաջին անգամ համակարգված պայքար սկսելու և օտարի լծից ազատագրվելու խնդիր դրվեց՝ նախանշելով այն ճանապարհը, որով հետագայում երկար ժամանակ պետք է ընթանար հայ ազատագրական պայքարը:

Երկրորդ ենթագլխում ներառված նյութը կարևոր է, քանի որ 1562 թ. ժողովում հաշվի առնվեց նախորդ՝ 1547 թ. փորձառությունը: Այսպես՝ ժողովի վայրը պարսից տիրապետության ենթակա տարածքից՝ Ս. Էջմիածնից տեղափոխվեց օսմանյան Թուրքիայի ենթակա տարածք: Բացի այդ՝ խորհրդաժողովի վերաբերյալ պահպանվել են մի շարք վավերագրեր և պատմական վկայություններ, որոնց մի մասն այսօր տարբեր հետազոտողների շնորհիվ հասանելի է, սակայն այս ժողովին վերաբերող որոշ գրություններ շարունակում են անհայտ մնալ:

Երրորդ գլուխը՝ **«Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը և հայ ազատագրական պայքարը»**, նվիրված է Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի գործունեությանը, որը կարևոր դերակատարում է ունեցել հայ ազատագրական պայքարի կազմակերպման գործում: Այս գլուխը նախորդների նման ունի ենթաբաժանումներ. ա) **«Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի՝ հայ ազատագրական պայքարի ուղղությամբ իրականացրած գործունեությունը 1655–1674 թթ.»**, բ) **«Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի 1677–1680 թթ. գործունեությունը»**:

ԺԷ դարը համարվում է վերազարթոնքի շրջան, որը մեծ ազդեցություն թողեց ոչ միայն Հայոց Եկեղեցու, այլև հայ ժողովրդի պատմության հետագա ընթացքի վրա: Վերազարթոնքի շրջանը պայմանավորված էր հատկապես ԺԷ դարում ուսյալ հոգևորականների գործունեությամբ, որը նպաստելու էր հայ ազատագրական պայքարի վերելքին: ԺԷ դարի երկրորդ կեսի հայ իրականության մեջ շուրջ երկուսուկես տասնամյակ հայ ազատագրական պայքարը կազմակերպելու փորձերը սերտորեն առնչվում են հիմնականում Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի անվան հետ, ուստի ատենախոսության մեջ վերոնշված ենթաբաժանումներով փորձ է արվել բազմաթիվ հարցադրումների միջոցով ներկայացնել Հակոբ Դ Ջուղայեցու կարևոր ներդրումը հայ ազատագրական պայքարի կազմակերպման և հետագա կողմնորոշման հարցում:

«Հավելված»-ում ներկայացված են տարբեր փաստաթղթերի բնօրինակներ[38], որոնցից որոշներն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Եզրակացություններ: Այսպիսով՝ «Հայոց Եկեղեցին ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարում» ուսումնասիրությամբ անդրադառնալով խնդրո առարկա մի շարք հիմնահարցերի՝ հայ ազատագրական պայքարի պատմությունը դիտարկվել և մեկնաբանվել է հոգևոր դիտանկյունից: Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս ներկայացնել հետևյալը.

ա. Աստվածաշնչյան տեղիների, հայ և օտար եկեղեցական գրականության և եկեղեցական մատենագրության, պատմագրության և ծիսամատյանների քննությունը ցույց է տալիս, որ ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարը ներդաշնակ է եղել Եկեղեցու՝ պատերազմի և խաղաղության վերաբերյալ ընկալումներին:

բ. Առաջին անգամ ցույց է տրվում, որ արդի շրջանի «արդարացի պատերազմ» սկսելու միջազգային չափանիշները այս կամ այն կերպ առկա են եղել ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի ձևավորման և ընթացքի մեջ՝ որոշակի ազգային նկարագրով և չափանիշներով:

գ. Սույն ուսումնասիրությամբ համակարգված և համակողմանի ներկայացվել են ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարին նպաստող ներազգային այն հանգամանքները, որոնք օգնել են պայքարի գաղափարախոսության հղկմանը և տարածմանը: Ըստ այդմ՝ ընդգծվել է, որ

[38] Ներկայացված են Վատիկանի առաքելական (նախկինում՝ Վատիկանի գաղտնի արխիվ), Հավատի տարածման հանձնաժողովի, Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության և ՄՄ Մատենադարանի արխիվներում պահպանվող փաստաթղթեր:

տվյալ շրջափուլի ազատագրական պայքարի գործողությունները նախապես քննարկված և ծրագրված էին: Այս շրջանում խիստ կարևորվում էր բուն հայրենիքի շուրջ համախմբումը, ինչի շնորհիվ Սուրբ Էջմիածինը ԺՋ–ԺԷ դարերում դառնում է կապող օղակ նախորդ դարերի եկեղեցական-քաղաքական գաղափարների և որոնումների ու ԺԸ դարում ծավալված հայ ազատագրական պայքարի միջև:

դ. Ստեփանոս Ե Սալմաստեցու նախաձեռնությամբ գումարված 1547 թ. խորհրդաժողովն իր առջև համակարգված պայքար սկսելու և օտարի լծից Արևմուտքի օգնությամբ ազատագրվելու խնդիր դրեց: Սակայն ԺՋ դարի առաջին կեսին դեռևս չկար քաղաքական և ռազմական այն ուժը, որով հնարավոր կլիներ կազմակերպել այդ պայքարը: Երկրորդ՝ Եկեղեցուց զատ՝ չկար առաջնորդող այլ ուժ. Հայ Եկեղեցու՝ ազատագրական պայքարի համար սկսած բանակցությունների փակուղում հայտնվելը պայմանավորված էր կողմերի կրոնական հայացքների տարբերություններով և որոշակի հակասություններով, որոնք բանակցությունների ժամանակ, Արևմուտքի պնդմամբ, դառնում էին առաջնային՝ երկրորդական դարձնելով ազատագրական պայքարը: Ստեփանոս Ե Սալմաստեցուց սկսած՝ հայ ազատագրական պայքարի գաղափարախոսներն աստիճանաբար զարգացնում էին մի նոր քաղաքական կողմնորոշման ուղղություն՝ Հայաստանն ազատագրել Ռուսաստանի օժանդակությամբ:

ե. Միքայել Ա Սեբաստացի կաթողիկոսի նախաձեռնությամբ 1562 թ. Սեբաստիայի ժողովն ազատագրական պայքարի կարևորագույն հանգրվաններից է, որի արդյունքում ձևավորված բանագնացության և նրա հարակից հարցերի նորովի ուսումնասիրությունը լույս է սփռում Հայոց պատմության այդ շրջանի վրա:

զ. ԺԷ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական պայքարում կարևոր դերակատարում ունի Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը: Վերջինիս թե՛ Օսմանյան կայսրություն և թե՛ Պարսկաստան կատարած այցելությունները հետապնդում էին մեկ նպատակ՝ պատրաստել հայությանն ազգային-ազատագրական պայքարի, միավորել ժողովրդի ուժերը, ստեղծել դիվանագիտական կապեր: Հակոբ Դ Ջուղայեցու գործունեության արդյունքում հասունացել էր պահը, երբ հնարավոր դարձավ հայ ազատագրական պայքարի կազմակերպումը և քաղաքական կողմնորոշումը անհիրատեսականից տեղափոխել առավել իրատեսական տիրույթ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Հայ Առաքելական Եկեղեցին ազգային-ազատագրական պայքարում. որոշ համամարդկային գաղափարական հարցեր, «Հայկական բանակ», թիվ 4, 2017, էջ 97-109:
2. Ս. Էջմիածնի 1547 թվականի ժողովը, «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», 2019, թիվ 2, էջ 55-67:
3. Սեբաստիայի 1562 թվականի խորհրդաժողովը և Աբգար Դպիր Եվդոկացու բանագնացությունը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 28, Երևան, 2019, էջ 168-189:
4. Հակոբ Դ Ջուղայեցի Կաթողիկոսը և հայ ազատագրական պայքարը 1655-1674 թթ., մաս Ա, «Էջմիածին», 2020, Է, էջ 24-38:
5. Հակոբ Դ Ջուղայեցի Կաթողիկոսը և հայ ազատագրական պայքարը 1655-1674 թթ., մաս Բ, «Էջմիածին», 2020, Ը, էջ 45-60:
6. Ս. Էջմիածնի գաղտնի ժողովը և Հակոբ Դ Ջուղայեցի Կաթողիկոսի բանագնացությունը հայ ազատագրական պայքարի ուսումնասիրման համատեքստում, «Էջմիածին», 2020, Թ, էջ 48-67:
7. ԺԶ-ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարին նպաստող հանգամանքները, «Էջմիածին», 2022, Թ, էջ 90-112:

СВЯЩЕННИК АРАРАТ (АРМАН) ПОГОСЯН

АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ В АРМЯНСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XVI-XVII ВЕКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 8-го сентября 2023 г. в 13^{00} часов на заседании специализированного совета по История Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению армянской национально-освободительной борьбы XVI—XVII веков. Всесторонне исследована идеология национально-освободительной борьбы и способствующие ей обстоятельства. Цель данной диссертации рассмотреть и оценить многие проблемы, связанные с историией Армении, ознакомиться с деятельностью Армянской Апостольской Церкви на основе соотвествующих документов и представить место и роль Святого Эчмиадзина в истории армянской освободительной борьбы XVI—XVII веков, изучить церковные восприятия мира и войны, а также важную роль и деятельность католикосов всех армян XVI—XVII. В данной работе сосредоточено внимание исключительно на роли Церкви и духовенства в национально-освободительном движении, что очень важно и в идеологическом, и в военном, и в дипломатическом и в других отношениях. В диссертации были использованы сравнительно-исторический, историко-исследовательский, аналитический, сопоставительный, а иногда и описательный методы исследования истории. В качестве научной инновации выступает современное отношение Армянской Церкви к вопросу войны и мира, как к систематизированному учению, что не изучалось на практике, а также по-новому были исследованы документы XVI—XVII веков, изданные и проанализированные в основном последователями других конфессий. В работе впервые представлены специальные документы из армянского, ватиканского и московского архивов, некоторые из которых до сих пор не были известны научному сообществу. История выбранного периода изучена относительно мало, и поэтому основное внимание уделено именно ему. В процессе написания

диссертации использована ценная объёмистая историко-источниковедческая литература: архивные материалы, хранящиеся в армянских и зарубежных хранилищах, историографические источники, исследования и т.д.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений.

Во введении были определены цель, актуальность темы и другие вопросы. Оно обеспечивает достаточное обоснование важности представления темы с новой точки зрения.

В первой главе — «Обоснование идеологии армянской освободительной борьбы XVI—XVII вв. и способствующие обстоятельства», впервые в армянской действительности приводятся ряд важных обстоятельств, способствовавших армянской освободительной борьбе XVI—XVII вв., а также идеологические обоснования вовлеченности духовных деятелей в борьбу за родину.

Во второй главе — «Значение собраний Св. Эчмиадина 1547-ого и Себастии 1562-ого гг. в планах армянской освободительной борьбы XVI века», рассматриваются упомянутые собрания, подчеркивая, что борьба в тот период носила систематический характер и католикосы этого времени выступали организаторами освободительного движения.

Третья глава — «Католикос Акоп IV Джугаеци и армянская освободительная борьба», посвящена собранию 1678 года, инициатором которого был Акоп IV Джугаеци, который и сыграл важнейщую роль в борьбе за свободу родины.

В приложении представлены оригиналы различных документов, некоторые из которых впервые вводятся в научный оборот.

Результаты научного исследования были резюмированы в заключениях.

FR. ARARAT (ARMAN) POGHOSYAN

THE ARMENIAN CHURCH DURING THE ARMENIAN LIBERATION STRUGGLE IN THE 16TH – 17TH CENTURIES

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of «History of Armenia» 07.00.01

The Defense of the Dissertation will be held on September 8, at 13^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Scienses of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

This dissertation is devoted to the study of the Armenian national liberation struggle of the 16th – 17th centuries. The ideology and the contributing circumstances of the national liberation struggle are comprehensively examined. The purpose of the dissertation is to review and evaluate the many problems related to the history of the Armenians, to get acquainted with the history of the Armenian Apostolic Church by documenting the place and role of Holy Etchmiadzin in the Armenian liberation struggle of the 16th – 17th centuries, to study ecclesiastical perceptions of peace and war, as well as the important role and activity of the Catholicoi of All Armenians of the 16th – 17th centuries in the Armenian liberation struggle. This work is focused only on the role of the Church and the clergy in the Armenian liberation struggle, which is important in ideological, military, diplomatic and other aspects. Historical-comparative, historical-critical, analytical, comparative, and sometimes descriptive methods of historical research have been applied. As a scientific innovation, the modern attitude of the Armenian Church towards war and peace have been highlighted as a systematic doctrine, which has not been practically studied. Documents of the 16th – 17th centuries, published and analyzed mainly by those, who are not followers of the Apostolic Church, have been studied in a new way. In addition, for the first time, special documents from the archives of Armenia, the Vatican and Moscow, some of which are still unknown to the scientific community, have been presented. The chosen period - the history of the 16th – 17th centuries is relatively poorly studied, therefore the focus is on this part. Valuable and voluminous literature on history and source studies have been used: archival

materials stored in Armenian and foreign archives, historiographic and historical sources, studies, etc.

The study consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, as well as appendices.

In the introduction, purpose, relevance of the topic and many more are defined. The introduction provides sufficient justification for the importance of presenting the topic from a new perspective.

In the first chapter, entitled "The Substantiation and the Contributing Circumstances of the Ideology of the Armenian Liberation Struggle of the 16th – 17th Centuries", for the first time in the Armenian reality, a number of important circumstances contributing to the Armenian liberation struggle of the 16th – 17th centuries are introduced, as well as the ideological justifications for the involvement of the clergy in the struggle for the homeland are presented in detail.

In the second chapter, entitled "Significance of the Councils of 1547 in Holy Etchmiadzin and of 1562 in Sebastia in the Plans of the Armenian Liberation Struggle of the 16th Century", the councils of 1547 and 1562 are reflected, emphasizing the systematic character of the struggle in that period. The Catholicoi of All Armenians, as the organizers of the movement, were the bearers of this reality.

The third chapter, entitled "Catholicos Hakob IV of Julfa and the Liberation Struggle of the Armenians" is dedicated to the council of 1678, initiated by Hakob IV of Julfa, who played an important role in the struggle.

The appendix contains the originals of various documents, some of which are introduced into scientific circulation for the first time.

The results of the scientific study have been summarized in the conclusions.